

**<<Օլիգարխներ>> վե՞րջը: Մինչ- ու հետ-հեղափոխական
խրոդություններն ու Հայաստանի տնտեսական և քաղաքական
վերնախավը**

Զեկուցումը անդրադառնում է Հայաստանի նոր հետ-խորհրդային վերնախավի մի մասին, որը հայտնի է <<օլիգարխներ>> հավաքական և տարբեր մոտեցումներ միավորող անվան տակ: Այդ տերմինը իր գիտական և ոչ-գիտական իմաստավորմամբ հայտնի է հետ-խորհրդային տարածքում, թեև տարբեր երկրներում այն կարող է ունենալ իմաստային նրբերանգներ: Հայկական <<օլիգարխիան>> կարող է բնութագրվել որպես վերնախավի նեո-ֆեոդալական տեսակը, որոշ կարևոր բնութագրիչների շնորհիվ. տնտեսական մոնոպոլիաների, գործողությունների ոլորտների ոչ-ֆորմալ, բանակցային և մրցակցային բաժանում օլիգարխների միջև, տարածքների ու համայնքների անձնական վերահսկում բացարձակ ազդեցության ու ինքնիշխանության հետ մեկտեղ, իշխանության ու կապիտալների լեգիտիմացման ոչ պետական, այլ սիմվոլիկ ձևեր, ինչպիսին են կրոնը, պրեստիժային փոխանակումը և ամուսնական ռազմավարությունները, ուժային ցանցերի ստեղծումը կլաների, ընդարձակված <<ընտանիքների>> ու <<վասսալների>> լայն շրջանների տեսքով ու միջոցով, <<ենթակաների>> հետ հարաբերությունների կարգավորում պատրոն-կլիենտ սկզբունքով, յուրահատուկ կենսաոճ և <<օլիգարխիկ>> մշակույթին բնորոշ կենսակերպը, սոցիալական, բարոյական, հաղորդակցական և էսթետիկ <<կոդերը>>:

Զեկուցման մեջ քննարկվելու է, թե ինչ է նշանակում լինել օլիգարխ Հայաստանում մինչև 2018 թ. Թավշե հեղափոխություն և նրանից անմիջապես հետո: Մասնավորապես ուշադրություն է հրավիրվելու նրան, թե ինչպես էին փոխակերպվում օլիգարխների և <<օլիգարխապատկան>> տարածքներում ապրող ժողովրդի միջև հարաբերությունները, անգամ մինչև Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելը: Տեղական ըմբոստություններն ու դժգոհությունները մատնանշեցին շրջաններում իշխանական բուրգերի քանդման սկիզբը: Իշխանության փոփոխությունն ու հակակոռուպցիոն պայքարի առաջին իսկ քայլերը բացահայտեցին փոխադարձ պարտավորվածությունների ու քրեական աջակցման վրա հիմնված <<պատրոնների>> ու <<վասսալների>> նեո-ֆեոդալական կառուցվածքի գոյությունը: Կառուցվածքային փոփոխությունների հետ գուգահեռաբար սկիզբ առավ նաև օլիգարխիկ մշակույթի սիմվոլների ու արժեքների համակարգի փոխակերպումը: Զեկուցումը քննարկելու է այդ գլոբալ գործընթացների նախնական արդյունքները: